

Կ. ԿՈՍՏԱՆԾԱՆ. 1. Նոր ժողովածու. Դ. պրակ. Միջնադարեան Հայոց տաղեր և ոտանաւորներ. Վաղարշապատ տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1903. էջ 84 2. ՅԱԿՈՎԲ ԿԱՐՆԵՅԻ. Տեղագիր վերին Հայոց. յիշատակարան ժէ. դարու. Վաղարշապատ. տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1903. էջ 75:

Գրքոյկներէս հեղինակը, որ քսան հինգ տարուց աւելի ծառայել է մեր դպրանոցներում, այսօր Ս. Էջմիածնի ճեմարանի տեսչութիւնն է վարում: Աւելի վաղ սկսել է նա իւր գրական գործունէութիւնը. 1877 թուականից մինչև այսօր հրատարակել է 25 գրութիւն, որոնցից 7 գրաբարի դասագիրք են, մնացեալ 18 հայոց պատմութեան և գրականութեան են վերաբերում: Կոստանեանցը իւր գրական երկասիրութիւններով բաց արաւ մեր առաջ մեր միջնադարեան գրականութիւնը, մի նոր աշխարհ, որտեղ հանդէս եկան շատ հազիւ լսուած և մեծ մասամբ բոլորովին անծանօթ անուններ: Այսպէս նորա աշխատութեամբ լոյս են տեսել 1885 թուականից մինչև ցարդ Ստ. Օրպէլեան Ողբ Ի ս. Կաթողիկէն, Յովհաննէս Թլկուրանցի և իւր տաղերը, Գրիգոր Աղթամարցի, Մկրտիչ Նաղաշ և Նոր ժողովածու վերնագրով չորս գրքոյկ՝ Ա—Դ պրակ: Պրակներում ամփոփուած են, ինչպէս Դ. պրակի վերջը գրուած «երգիչների այբբենական ցանկից երևում է, ինչ էք կարծում, ուղիղ քառասուն հեղինակի անուն: Իթէ բարեբախտաբար պրակները շարունակուին, անշուշտ երևան կը գան դեռ շատ անյայտ հեղինակներ իրենց երկերով: Ինչպէս նախկին պրակները, այնպէս էլ վերջին Դ. պրակը ունին ծանօթութիւններ, ուր տեղեկութիւններ կան տաղերի ու ոտանաւորների մասին, մեղուի ջանասիրութեամբ քաղուած հնագոյն հրատարակութիւններից և հմուտ կերպով դասաւորուած և լուսաբանուած: Պէտք է ասել՝ որ պրակներս աւելի կուտուրական և լեզուաբանական նշանակութիւն ունին, որովհետև մեծ մասը բանաստեղծական արժանիք չունին, սակայն երբեմն գտնուում են անգին մարգարիտներ, որոնք աւելնով գրուած, և մօտենում են նոյն իսկ ժողովրդական երգերին իւրեանց բովանդակութեամբ, ոգւով, լեզուով ու ձևով: Պրակիս վերջին տաղը «Տաղ ուրախութեան և խաղու» այս տեսակներից է. նիւթը եկեղեցին է,

որ նաւի է նմանեցրած, մենք այստեղ յառաջ կը բերենք սկըզբի և վերջի տները:

1. Ահա ցնծա՛յր ծովն ու ծփայր,
Ալին զալին տայր.

Ծովն յարևուն մանր աւազին
Խաղայր ծփայր 'ւալին զալին տայր:

2. Ահա խաղայր նաւն ի ծովին,
Ալին զալին տայր.

Նաւն ի ծովին,

Ծովն յարևուն մանր աւազին
Խաղայր ծփայր 'ւալին զալին տայր.

3. Ահա տեսէք թիւնչ կայ ծովին,
Որ նաւն ուռամբ գայր

Ահա տեսաք բեմք կայ նաւին,

Որ նաւն ուռամբ գայր

Բեմքն ի նաւին

Նաւն ի ծովին

Ծովն յարևուն մանր աւազին

Խաղայր ծփայր 'ւալին զալին տայր:

և այլն և այլն:

13. Ահա թռաւ ձազն ի բնէն.

Թռաւ, թռաւ թեն ի խաչին

Թառն ի թերին,

Թեն ի խաչին,

Խաչն ի տակին,

Տակն ի վիմին,

Վէմն ի բեմքին,

Բեմքն ի նաւին,

Նաւն ի ծովին

Ծովն յարևուն մանր աւազին

Խաղայր ծփայր 'ւալին զալին տայր:

12. Ահա տեսաք ձազն ի բնին,

Որ նաւն ուռամբ գայր.

Ձազն ի բնին,

Բունն ի ճղին,

Ճիւղն ի ծառին,

Ծառն ի տակին,

Տակն ի խաչին,

Խաչն ի վիմին,

Բեմքն ի նաւին,

Նաւն ի ծովին,

Ծովն յարևուն մանր աւազին

Խաղայր ծփայր, 'ւալին զալին տայր:

14. Ահա ցնծա՛յր ծովն ու ծփայր,

Ալին զալին տայր.

Ձագն ի թառին թեն ի խաչին,
 Ձագն յարևուն ծովն ի ծոցուն.
 Խայտայր թռչէր քաղցրիկ օդուն.
 Մովն յարևուն մանր աւազին
 Յնծայր ծփայր, ւալին զալին տայր:

Կոստանեանցի միւս երկերը հայոց պատմութեան ուսումնասիրութիւններ են, որոնցից ժամանակով առաջինն է եռահատոր «Հիւսուածք» ապա Հայոց Հեթանոսական կրօնը, Հայոց վանքերը, Ս. Լուսաւորչի աջը և Պետրոս Գետադարձ. մենագրութիւններ, որոնք լուսաբանում են մեր պատմութեան շատ կէտեր: Բացի այդ նա հրատարակել է Թովմայ Մեծոփեցու Յիշատակարանը, Այսպիսի մի գործ է ժն դարում ապրող Յակովբ Կարնեցու «Տեղագիր վերին Հայոց» յիշատակարանը, որ հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս Կարնոյ նահանգի նոյն դաիւր պատմութեան, բայց մանաւանդ աշխարհագրութեան, զետերի, լեռների, քաղաքների բնակիչների, սոցա պարագամաց, երկրի բերքերի, առևտուրի, կառավարութեան մասին և այլն: Կոստանեանցի ինչպէս վերոյիշեալ հրատարակութիւններն, այնպէս և այս հրատարակութիւնն ունին գործին վերաբերեալ յառաջաբաններ և հմտալից ծանօթութիւններ: Մեզ սակաւ ինչ անհաւանական է թւում գրքոյկիս ծանօթութիւն Դ. Պէտք է նկատել՝ որ Յակովբ Կարնեցին շատ անգամ հին աշխարհագրական անունները համեմատում է նորերի հետ, խօսելով վերին Բասենի Հասան-ղալէ բերդի մասին, ասում է «որ հայ ըարըառով կոչեն այժմ՝ Դորոնք»: Այսպիսով ուրեմն մենք իմանում ենք, որ հայերը մինչև ժն. դարը պահել են Փաւստոս Բիւզանդացու Կովգայ կամ Կոգայ երկրում յիշած «ամուր բերդի» անունը, որտեղ պահւում էին Արշակունեաց գանձերը, և որ նա կոչում Դարճնից, Դարճնաց, Դարճնից բերդ (Փաւստոս Գ. է. էջ 16: Դ. խ. էջ 157: Ս. դ. էջ 199), և որ այդ այժմեան Հասան Ղալէն է: Յակովբ Կարնեցին յիշում է նոյն տեղում և «Դրոնք» լեռներ, որտեղ համասփիւռ ծաղիկն է բուսնում: Կոստանեանցը ճիշտ նկատում է, որ Դրոնք և Դորոնք անունները միևնոյն տեղում ունին անշուշտ մի սերտ առնչութիւն, բայց թէ ի՞նչպէս են կապուած այս նոյն անունները Դրոնց կոչման հետ, անհասկանալի է մնում մեզ: Լեզուն հոլովման այդպիսի օրինակ չէ տալիս, իսկ ինքը Կոստանեանցն արդէն յիշում է, որ ըստ Մատթէոս.

Ուռնայեցու «Գրուց աշխարհ» կոչւում է Վանանդու թագաւորութիւնը: Մեր ձեռքի տակ ունինք սոյն յիշատակարանի մի այլ օրինակը, որի վերնագիրը տարբեր է և հէնց սկզբում ունի մի մեծ հատուած աւելի բան: Մեզ ցանկալի էր, որ մի Կրկրորդ տպագրութեան ժամանակ թէ այս և թէ Կոստանեանցի իւր ձեռագրի (էջ 45) բաց թողած հատուածը տպագրուէին: Մանօթ պատմագիրներէց քաղած հատուածը ինչպէս այս դէպքում Սեբէոսինը ոչ միայն անպատճառ պատմական, այլ և լեզուաբանական և կամ այլ պատճառներով և իբրեւ ամբողջութիւն կարեւոր էր:

Որպէս զի ամբողջացրած լինինք Կոստանեանցի երկասիրութեանց ցանկը, չմոռանանք յիշել նորա աչքի ընկնող բանասիրական մի երկը «Համամ Արեւելցին»:

Մեր ժամանակը, մանաւանդ թէ մեր ընթերցող դասակարգը, լրագրութիւնից և վէպերից դէն չէ անցնում: Ամեն բան ժողովրդականացնելու յախուռն ցանկութիւնը չէ գնահատում այս տեսակ գիտական ուսումնասիրութիւնները և ըմբռնում չէ այս տեսակ մենագրութեանց իշխանկութիւնը: Մարդիկ մոռանում են, որ մինչև չլինին Կոստանեանցի նման շատ անխնայ մենագիր մշակներ, հեղինակներ, անհնարին կը լինի պատրաստել գիտութեան պահանջներին համապատասխան գրականութիւն և ազգային պատմութիւն, որոնց մասին լսում է և խօսւում և և կարծես թէ մեծ պահանջ է զգացւում: Մեզնում թեւակոխում են այս ասպարէզը մարդիկ, որոնց համար նոյն իսկ պարզ չէ ազգային գրականութեան և պատմութեան սահմանը:

Սակայն և այնպէս մխիթարական է, որ Կոստանեանցը մենակ չէ այդ ասպարէզում և նորա նման ուրիշ խորհողներ և աշխատողներ էլ կան. իսկ Կ. Կոստանեանցին ի բոլոր սրտէ ցանկանում ենք յարատեւութիւն և յաջողութիւն:

ՍԿԱՅ

Современные армянские поэты. М. 1903 г. ц. 1 р.

Ուղիղ տասը տարի սրանից առաջ լոյս տեսաւ պ. պ. Քւրիչ Վեսելովսկու և Մինաս Բերբերեանի խմբագրած և հրատարակած «Армянские Беллетристы» գրքի առաջին հատորը: Դա առաջին սխտեմատիկ փորձն էր ծանօթացնել ռուս ըն-